



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

06.05.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/58

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն
Բողոք բերող՝ «Դիավանտ» ՍՊԸ
Համանման բողոք բերող՝ «Աննարկա» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Սիուն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ՝ Մ. Համբարձումյանի,
«Դիավանտ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Դ. Առաքելյանի, ներկայացուցիչներ՝ Զ. Սարգսյանի, Ա.
Սիրունյանի,
«Աննարկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Մ. Ավետիսյանի, Ե. Սարգսյանի, Մ.
Սարգսյանի,
«Սիուն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Բ. Պետրոսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ,
բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Դիավանտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 11.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, «Աննարկա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն 1) կողմից 25.04.2022թ.-ին ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ համանման բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել ՀՀ առողջապահության նախարարությանը կիրառել անգործության ժամկետ առնվազն 5 օրացուցային օրով:

2. Պարտավորեցնել ՀՀ առողջապահության նախարարությանը «ՀՀ ԱՆ ՄԱԱՊԶԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում մերժել «Աննարկա» ՍՊԸ-ի հայտը և փոփոխել 1-ին չափաբաժնով «Աննարկա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը տեխնիկական բնութագրի՝ հրավերին անհամապատասխանության հիմքով:

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ՀՀ ԱՆ ՄԱԱՊԶԲ-2022/21 գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչել 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընկերություն 1-ը, ներկայացրած համանման բողոքով, Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել Պատվիրատու ՀՀ առողջապահության նախարարության «ՀՀ ԱՆ ՄԱԱՊԶԲ-2022/21» ծածկագրով Գնահատող հանձնաժողովին մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում մերժել «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և փոփոխել 2-րդ չափաբաժնով «Դիավանտ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը տեխնիկական բնութագրի հրավերին անհամապատասխանության հիմքով:

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին «ՀՀ ԱՆ ՄԱԱՊԶԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում 2-րդ չափաբաժնով 2-րդ

տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Սիուն» ՍՊԸ-ին, ներկայացնել պահանջվող բոլոր փաստաթղթերը:

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում 2-րդ չափաբաժնով «Սիուն» ՍՊԸ-ի կողմից հայտի փաստաթղթերի բացակայության դեպքում հայտը մերժել, և ընտրված մասնակից ճանաչել 3-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Աննարկա» ՍՊԸ-ին համապատասխան գնիջեցման դեպքում:

Բողոքներ քննող անձին «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 11.04.2022թ.-ին:

12.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/58 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 25.04.2022թ.-ին:

25.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված համանման բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/58 համարի ծածկագիրը:

29.04.2022թ.-ին՝ ներկայացված բանավոր միջնորդության հիման վրա «Սիուն» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

21.04.2022թ.-ին, 29.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. «Դիավանտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դիավանտ» ՍՊԸ-ն 11.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. ՀՀ Առողջապահության նախարարությունը (Այսուհետ՝ Պարվիրատու) բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որը հրապարակվել է 22.02.2022թ.-ին eauction.armeps.am համակարգում:

1-ին չափաբաժնի մասով մասնակցել էին Հրաչիկ Եղիազարյան ԱԶ, «Մեդիտեխնիկա պլյուս» ՓԲԸ, «ԱրտՍպանդարտ» ՍՊԸ, «ՍԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ և «Դիավանտ» ՍՊԸ ընկերությունները:

2-րդ չափաբաժնի մասով մասնակցել էին Հրաչիկ Եղիազարյան ԱԶ, «Սիուն» ՍՊԸ, «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ և «Դիավանտ» ՍՊԸ ընկերությունները:

Հակադարձ աճուրդի բացվելուց հետո նախահաշվային գինը գերազանցելու հիմքով 1-ին չափաբաժնի մասով մերժվեցին Հրաչիկ Եղիազարյան ԱԶ-ն և «ՍԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն: Նույն հիմքով 2-րդ չափաբաժնով մերժվեցին «Սիուն» ՍՊԸ և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն առաջարկեց Հրաչիկ Եղիազարյան ԱԶ-ին և «Մեդիտեխնիկա պլյուս» ՓԲԸ-ին շրկել հայրում տեղ գրած անհամապատասխանությունները: Արդյունքում Հրաչիկ Եղիազարյան ԱԶ-ն չի շրկել, իսկ «Մեդիտեխնիկա պլյուս» ՓԲԸ-ն շրկել է:

Սակայն ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊԶԲ-2022/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը հայտարարվեց չկայացած, քանի որ Հրաչիկ Եղիազարյան ԱԶ-ն չշրկեց անհամապատասխանությունը, իսկ «Մեդիտեխնիկա պլյուս» ՓԲԸ-ի կողմից շրկված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատվեց անբավարար: (արձանագրությունը կից ներկայացվում է)

1.2. 04/04/2022թ. ժամը 12:53-ին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակցի էլ. հասցեից (m.hambardzumyan@moh.am) ստացանք բանակցությունների մանակցության հրավեր ստորև նշված բովանդակությամբ. (նամակագրությունից արտատպված պատճենը (screenshot) կից ներկայացվում է):

«Հարգելի գործընկերներ,

Տեղեկացում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊԶԲ-2022/16 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ձեր կազմակերպությունների կողմից ներկայացվել էին հայտեր:

Նշեմ նաև, որ ձեր կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հնարավոր մեկ անձից գնման գործընթացը՝ սույն թվականի ապրիլի 5-ին ժամը 17:00-ին ՀՀ առողջապահության նախարարությունում տեղի են ունենալու գների նվազեցման շուրջ բանակցություններ:

Խնդրում եմ ներկա գտնվել բանակցությունների նիստին: Կազմակերպությունների ներկայացուցիչները պետք է իրենց մոտ ունենան համապատասխան լիազորագիր և անձնագիր:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

Միհրան Համբարձումյան

Հեռ 060 80-80-03 (2703)»:

05/04/2022թ. բանակցությանը մասնակցել էին հետևյալ կազմակերպությունները.

- 1-ին չափաբաժնով՝ «Աննարկա» ՍՊԸ-ն և «Դիավանդ» ՍՊԸ-ն,
- 2-րդ չափաբաժնով՝ «Սիուն» ՍՊԸ-ն, «Դիավանդ» ՍՊԸ-ն և «Աննարկա»

ՍՊԸ-ն:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ վերը նշված մասնակիցների հայտերը վերցված են ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ներկայացված հայտերից և էլեկտրոնային աճուրդի հրավերի պահանջների համապատասխանության գնահատմամբ են Պատվիրատուի կողմից գնահատվել բավարար, իսկ որպես բանակցային գներ սահմանվել են հակադարձ աճուրդի ժամանակ ներկայացրած վերջնական գները:

Բանակցության արդյունքում 1-ին չափաբաժնի համար հաղթող է ճանաչվել «Աննարկա» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնի համար՝ «Դիավանդ» ՍՊԸ-ն:

«Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված և բավարար գնահատված տեխնիկական բնութագրում նշված է «360° լրիվ պտույտով սկանավորման մինիմալ ժամանակը՝ ոչ ավելի քան 0,6վրկ» պահանջը: Այնինչ FUJIFULM արտադրողի տեխնիկական տվյալների պաշտոնական և բոլորին հասանելի աղյուսակում (կից ներկայացվում է) նշված է «360° լրիվ պտույտով սկանավորման մինիմալ ժամանակը 0,75վրկ»:

07/04/2022թ. Պատվիրատուն ուղարկել է պայմանագրի նախագիծը, չկիրառելով անգործության ժամկետ: Պատվիրատուի կողմից անգործության ժամկետի չկիրառումը պատճառաբանել է հրատապ գնման պահանջից ելնելով (էլեկտրոնային փոստի միջոցով պայմանագրի նախագծի ծանուցման մասին արտապրված պատճենը (screenshot) կից ներկայացվում է):

2. ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-5 մասերի համաձայն. «1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընդրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր

մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:»

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 6 և 7-րդ մասերի համաձայն. «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

2. Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

...

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:»:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պարվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պարվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին»:

2.2. ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման X բաժնի համաձայն. «71. Մեկ անձից գնումների կատարման ժամանակ գործում են սույն կարգի 7-րդ բաժնով սահմանված պահանջները՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) եթե գնումն իրականացվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ», «գ», «դ» և «ե» պարբերություններով նախատեսված հիմքերով, ապա՝

ա. հրավերը գնման հայտում նշված մասնակիցներին ուղարկվում է միաժամանակյա ծանուցմամբ՝ այն նույն օրը հրապարակելով նաև տեղեկագրում,

բ. հայտերի ներկայացման ժամկետը սահմանվում է ոչ շուր, քան հրավերն ուղարկվելու օրվանից երկու և ոչ ուշ քան հինգ աշխատանքային օր,

գ. մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, համարեղ գործունեության պայմանագիր, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են կոնսորցիումով, գնային առաջարկ, հրավերով նախատեսված՝ մասնակցության իրավունքը հիմնավորող փաստաթղթեր, ապրանքների գնման դեպքում՝ ապրանքի ամբողջական նկարագիր,

դ. մասնակիցը հայտը քարտուղարին (գնումների համակարգողին) է ներկայացնում հրավերով սահմանված կարգով՝ փակ ծրարով, եթե գնման գործընթացն իրականացվում է թղթային եղանակով,

ե. պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում հրավերը չի հրապարակվում տեղեկագրում,

զ. ընտրված մասնակիցը ներկայացնում է որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովում»:

2.3. Մեջբերված իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ մեկ անձից գնման ընթացակարգի համար նույնպես գործում են այն նույն պայմանները, ինչ մյուս ընթացակարգերի համար, բնականաբար գնման այդ ձևին հատուկ

առանձնահատկությունները հաշվի առնելով: Սակայն այդ առանձնահատկությունները հնարավորություն չեն տալիս Պատվիրատուին չկիրառել անգործության ժամկետ այն դեպքում, երբ միևնույն չափաբաժնի մասով կան 2-ից ավելի մասնակիցներ:

3. ԲՈՂՈՔԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

3.1. Վեճի առարկայի նախապատմության և մեջբերված իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ Պատվիրատուն դրսևորել է անգործություն: Մասնավորապես մինչև պայմանագիր կնքելը պետք է կիրառեր անգործության ժամկետ, որի ընթացքում մասնակիցները ունեն օրենքով իրենց վերապահված բողոքարկման իրավունք: Եվ միայն այդ ժամկետի ավարտից հետո Պատվիրատուն պետք է ծանուցեր պայմանագրի նախագիծը: Այնինչ, Պատվիրատուն 05/04/2022թ.-ին տեղի ունեցած բանակցությունից 2 օր անց՝ 07/04/2022թ.-ին ծանուցում է պայմանագրի նախագիծը, պատճառաբանելով, որ հրատապ գնում է, ուստի անգործության ժամկետ կիրառելի չէ:

3.2. Բացի Պատվիրատուի կողմից փաստացի թույլ տրված անգործությունից, «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքն իրականում չի բավարարում էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին: Մասնավորապես ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2022/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված «360° լրիվ պտույտով սկանավորման մինիմալ ժամանակը՝ ոչ ավելի քան 0,6վրկ» պահանջին: «Աննարկա» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշել է այդ պայմանը: Սակայն փաստացի սարքը չունի այդ հնարավորությունը: Այսինքն իրականում «Աննարկա» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրի՝ սարքն առաջարկում է 0,75վրկ և ավել սկանավորման մինիմալ ժամանակ, այնինչ հրավերով պահանջվում է ոչ ավելի քան 0,6վրկ:

Որպես ապացույց ներկայացնում ենք FUJIFILM արտադրողի տեխնիկական տվյալների պաշտոնական և բոլորին հասանելի աղյուսակը (կից ներկայացվում է), որում նշված է 360° լրիվ պտույտով սկանավորման մինիմալ ժամանակը 0,75վրկ: (տե՛ս էջ 3):

Scan Parameters

- Rotation speeds: 0.75, 1.0, 1.5, 2.0 sec.
- Data collection speed: 1,200 views per second
- Minimum slice thickness: 0.625mm
- FOV: 20-500mm
- Max scan range 71in/1800mm
- Max scan rotations: 100
- Volume scan pitch: 0.56 to 1.56

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Գնահատող հանձնաժողովը պատշաճ կերպով չի գնահատել «Աննարկա» ՍՊԸ-ի ներկայացրած առաջարկվող ապրանքի

ամբողջական նկարագրի (տեխնիկական բնութագրի) հիմնավորվածությունը, ինչի արդյունքում եկել է սխալ եզրահանգման:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Դիավանտ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել ՀՀ առողջապահության նախարարությանը կիրառել անգործության ժամկետ առնվազն 5 օրացուցային օրով:

2. Պարտավորեցնել ՀՀ առողջապահության նախարարությանը «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում մերժել «Աննարկա» ՍՊԸ-ի հայտը և փոփոխել 1-ին չափաբաժնով «Աննարկա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը տեխնիկական բնութագրի՝ հրավերին անհամապատասխանության հիմքով:

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21 գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչել 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը, 28.04.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ, հավելել է նաև հետևյալը.

««Դիավանտ» ՍՊ ընկերությունը վերահաստատում է իր կողմից 2022 թվականի ապրիլի 11-ին ներկայացված ԳԲԲԱ-ԼՕ-2022/58 բողոքի պահանջները: Միաժամանակ գտնում ենք, որ բողոքը ենթակա է բավարարման, իսկ «Աննարկա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին Պարավիրատուի որոշումը՝ վերացման, որի համար ներկայացրել ենք բավարար և վերաբերելի ապացույցներ:

Այնուամենայնիվ, ղեկավարվելով բացառապես բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովման նպատակով, առաջարկում ենք պարտավորեցնել Պարավիրատուին օգտագործել իր գործիքակազմը և դիմել Fujifilm արտադրող ընկերության Ճապոնիայում գտնվող գլխամասին՝ պահանջելով պաշտոնական հավաստագիր (որը, առնվազն, հասցեագրված կլինի դիմողին), որը կհաստատի կամ կբացառի կոնկրետ վեճի առարկա հանդիսացող և «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարամետրի արժանահավաստությունը և համապատասխանությունը իրականությանը: Անհրաժեշտության դեպքում ՀՀ առողջապահության նախարարությանը կարող ենք պրամադրել համապատասխան հղում (Contact Forma):»:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Ընկերությունը լրացրել է բողոքի պահանջը և Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով Պատվիրատու ՀՀ Առողջապահության նախարարությանը դիմել «Fujifilm» արտադրող ընկերությանը և պահանջել պաշտոնական հավաստում վեճի առարկա հանդիսացող և «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարամետրի արժանահավատության վերաբերյալ:

Ընկերությունը, 29.04.2022թ.-ին ներկայացված համանման բողոքի առարկություններով, հայտնել է հետևյալը.

«25.04.2022թ. «Աննարկա» ՍՊԸ-ին կողմից ներկայացվել է համանման բողոք Պատվիրատու՝ ՀՀ Առողջապահության նախարարության որոշման դեմ, համաձայն որի ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21 գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով հաղթող են ճանաչել «Դիավանտ» ՍՊ ընկերությանը:

Գտնում ենք, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Անդրադառնալով բողոքում նշված այն պնդմանը, որ «այդ մոդուլը նույնիսկ չի անցել կլինիկական հետազոտություններ և չունի FDA կամ CE վկայականներ», նշենք, որ արհեստական բանականության (AI) հատուկ մոդուլը հանդիսանում է սարքի բաղադրամաս (sub-component) և համապատասխանում է Council Directive 93/42/EEC պահանջներին և պայմաններին, ի հավաստումն որի ներկայացնում ենք DrGem Corporation արտադրող ընկերության կողմից «Դիավանտ» ՍՊԸ-ին 26.04.2022թ. տրված պաշտոնական հավաստագիրը: Հավաստագրում նշվում է նաև, որ «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված GXR-82SD Premium Սարքն ամբողջությամբ համապատասխանում է 22.02.2022թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով մրցույթի պահանջներին:

Կից ներկայացնում ենք նաև EC վկայական որակի հավաստման ամբողջական համակարգի վերաբերյալ (EC CERTIFICATE Full Quality Assurance System), որում նշվում է, որ սերտիֆիկատը տրամադրվում է ռենտգենոգրաֆիկ համակարգի և իր բաղադրամասերի դիզայնի, արտադրության և սարքի վերջնական թեստավորման արդյունքում, որը գնատրվել է Council Directive 93/42/EEC պահանջներին և պայմաններին համապատասխան: Այն հանդիսանում է պաշտոնական հավաստագիր, որի վրա առկա է QR կոդ, որի օգնությամբ հնարավոր է հեշտությամբ սկանավորել այդ կոդը և անցում կատարել սերտիֆիկացնող մարմնի էջ: Սերտիֆիկատը վավեր է մինչև 16 ապրիլի, 2023թ.:

Կից ներկայացնում ենք նաև արհեստական բանականության (AI) հատուկ մոդուլի օգտագործման մանուալը: Քանի որ այս մոդուլը իրենից ներկայացնում է ծրագրային

ապահովում, այն սարքի մանուալից առանձին է, ունի գաղտնաբառ, որը մուտքագրելու դեպքում միայն հնարավոր է ծանոթանալ մանուալին: Հետևաբար այն չի հանդիսանում բոլորին հասանելի տեղեկատվություն և տրամադրվում է բացառապես արտադրողի կողմից Մատակարար ընկույրությանը:

Ինչ վերաբերում է բողոքում նշված այն պնդմանը, որ «փաստացի սարքը չունի այդ հնարավորությունը», ապա կարևոր ենք համարում ընդգծել, որ փաստացի չունենալու մասին կարող է խոսք գնալ միայն համապատասխան փորձագիտական եզրակացության առկայության դեպքում, որը բացակայում է: Հետևաբար սարքի՝ փաստացի այդ հնարավորությունը չունենալու վերաբերյալ հայտարարությունը հիմնադրել է:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք ասել, որ GXR-82SD Premium Սարքն ունի համապատասխան սերտիֆիկացում, որում նշվում է որ այն համապատասխանում է հրավերով պահանջվող Council Directive 93/42/EEC պահանջներին: Այն վերաբերում է ռենտգենոգրաֆիկ համակարգին և իր բաղադրամասերին ամբողջությամբ: Սերտիֆիկատը տրվել է սարքի վերջնական թեստավորումից հետո: Իսկ DrGem Corporation արտադրող ընկերության կողմից «Դիավանդ» ՍՊԸ-ին 26.04.2022թ. տրված պաշտոնական հավաստագիրը վերջնականապես ամբողջացնում է այն միտքը, որ արհեստական բանականության (AI) հատուկ մոդուլը հանդիսանում է սարքի բաղադրամաս (sub-component) և համապատասխանում է Council Directive 93/42/EEC պահանջներին և պայմաններին

Հետևաբար գտնում ենք, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:»:

Ընկերությունը, 05.05.2022թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Բողոքաբեր «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից 04.05.2022թ.-ին ստացվել է առարկություն: Կարևոր ենք համարում ընդգծել, որ Բողոքաբերը, «Դիավանդ» ՍՊԸ-ին հիշեցնելով Պատվիրատուից պարզաբանում խնդրելու հնարավորության մասին, ԱՆՏԵՍՈՒՄ է նույն Պատվիրատուի կողմից նույն բողոքի քննության շրջանակներում 27.04.2022թ.-ին ներկայացված գրությունը, որում Պատվիրատուն հստակ պարզաբանում է տրվել խնդրո առարկա հարցադրման վերաբերյալ և ձևակերպել է իր դիրքորոշումը իր իսկ կողմից հայտարարված գնման առարկայի տեխնիկական բնութագրի և անհրաժեշտ պահանջների վերաբերյալ:

Պատվիրատուն նշել է, որ արհեստական բանականության (AI) հատուկ մոդուլը ծրագրային ապահովում է ռենտգենյան սարքավորումների համար: Իսկ ինչ վերաբերում է

CE Mark (Directive 93/42/EEC) կամ FDA կամ համարժեք սերտիֆիկատ(ներ)ին, ապա այն տրվում է և վերաբերում է սարքավորման ամբողջ համակարգի համար, այլ ոչ թե որևէ կոմպոնենտի կամ ծրագրի համար:

Հեղևաբար, Պատվիրատու ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված դիրքորոշման լույսի ներքո հերքվում է «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի պահանջը և առակայագուրկ է դառնում 04.05.2022թ.-ին ներկայացված առարկությունը:

Միաժամանակ, վերահաստատելով մեր կողմից 29.04.2022թ. ներկայացված առարկությունը, նշում ենք, որ արհեստական բանականության (AI) հատուկ մոդուլը հանդիսանում է սարքի բաղադրիչ և համապատասխանում է Council Directive 93/42/EEC պահանջներին և պայմաններին, ի հավաստումն որի ներկայացրել ենք DrGem Corporation արտադրող ընկերության կողմից «Դիավանտ» ՍՊԸ-ին տրված համապատասխանության հավաստագիրը, հաստատված համապատասխան մարմնի կողմից: Իսկ 26.04.2022թ. տրված պաշտոնական հավաստագրում նշվում է նաև, որ «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված GXR-82SD Premium Սարքն ամբողջությամբ համապատասխանում է 22.02.2022թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով մրցույթի պահանջներին:

Առարկությունում ներկայացված մնացած հայտարարություններին «Դիավանտ» ՍՊԸ ընկերությունը չի անդրադառնում, քանի որ դրանք ըստ էության հիմնված են սուբյեկտիվիզմի վրա և չեն բխում Բողոքի մասնակիցներին հասանելի գործի նյութերից:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը և գործի լուծման համար ներկայացված և էական նշանակություն ունեցող բոլոր ապացույցները, գտնում ենք, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:»:

3. «Աննարկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Աննարկա» ՍՊԸ-ն 25.04.2022թ.-ին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«1. ՎԵՃԻ ԱՌԱՐԿԱՆ, ՓԱՍՏԵՐ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋ

1.1 ՀՀ Առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԱՆ

ԷԱՃԱՊՁԲ-2022/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որը հրապարակվել է 10.12.2021 թ.-ին eauctions.armeps.am համակարգում:

1-ին չափաբաժնի մասով մասնակցել էին Արթուր Չիլինգարյան ֆիզիկական անձ, <<ԱրՄեդիտեխնիկա>> ՍՊ, <<Պրոֆտեստ>> ՍՊ, <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲ և <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊ ընկերությունները:

2-ին չափաբաժնի մասով մասնակցել էին Արթուր Չիլինգարյան ֆիզիկական անձ, <<ԱրՄեդիտեխնիկա>> ՍՊ, <<Պրոֆտեստ>> ՍՊ, <<ՍԻՈՒՆ>> ՍՊ, <<Մարգ Ֆարմացիա>> ՍՊ, <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲ և <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊ ընկերությունները:

Հակադարձ աճուրդի բացվելուց հետո 1-ին և 2-րդ չափաբաժիններով հաղթող էր ճանաչվել Արթուր Չիլինգարյան ֆիզիկական անձը:

Հարկ եմ համարում նշել, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններով <<Aquilion Lightning, Canon Medical Systems>> և << GXR-82SD Premium, DrGEM Corp.>> ֆիրմային անվանումները առաջարկված են եղել <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ն կողմից:

Պատվիրատուն առաջարկեց Արթուր Չիլինգարյան ֆիզիկական անձին շտկել հայտերում տեղ գրած անհամապատասխանությունները, ինչը որ Արթուր Չիլինգարյան ֆիզիկական անձը չի շտկել:

Արդյունքում ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը հայտարարվեց չկայացած 1-ին և 2-րդ չափաբաժիններով, քանի որ Արթուր Չիլինգարյան ֆիզիկական անձը չշտկեց անհամապատասխանությունները:

1.2. Պատվիրատուն բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որը հրապարակվել է 22.02.2022 թ.-ին eauctions.armeps.am համակարգում:

1-ին չափաբաժնի մասով մասնակցել էին Հրաչիկ Եղիազարյան ֆիզիկական անձ, <<Մեդիտեխնիկա պլուս>> ՓԲ, <<ԱրտՍպանդարտ>> ՍՊ, <<ՍԱՎ ԳՐՈՒՊ>> ՍՊ, <<Դիավանտ>> ՍՊ և <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊ ընկերությունները:

2-ին չափաբաժնի մասով մասնակցել էին Հրաչիկ Եղիազարյան ֆիզիկական անձ, << Դիավանտ>> ՍՊ, <<ՍԻՈՒՆ>> ՍՊ և <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊ ընկերությունները:

Հարկ եմ համարում նշել, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններով <<Aquilion Lightning, Canon Medical Systems>> և << GXR-82SD Premium, DrGEM Corp.>> ֆիրմային անվանումները այս անգամ առաջարկված են եղել արդեն <<Դիավանտ>> ՍՊԸ-ն կողմից:

Հակադարձ աճուրդի բացվելուց հետո նախահաշվարկային գինը գերազանցելու հիմքով 1-ին չափաբաժնի մասով մերժվեցին Հրաչիկ Եղիազարյան ֆիզիկական անձ և

<<ՍԱՎ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն, իսկ 2-րդ չափաբաժնով՝ <<ՍԻՈՒՆ>> ՍՊ և <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊ ընկերությունները:

Պատվիրատուն առաջարկեց Հրաչիկ Եղիազարյան ֆիզիկական անձին և <<Մեդիտեխնիկա պլուս>> ՓԲԸ-ին շտկել հայտերում տեղ գրած անհամապատասխանարվությունները: Արդյունքում Հրաչիկ Եղիազարյան ֆիզիկական անձը չի շտկել, իսկ <<Մեդիտեխնիկա պլուս>> ՓԲԸ-ը շտկել է:

Արդյունքում ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը հայտարարվեց չկայացած, քանի որ Հրաչիկ Եղիազարյան ֆիզիկական անձը չէր կատարել անհամապատասխանությունը, իսկ <<Մեդիտեխնիկա պլուս>> ՓԲԸ-ի կողմից շտկված հայտը գնահատվեց անբավարար:

1.3. 04.04.2022 թ. ժամը 12:53 Պատվիրատուի աշխատակցի էլեկտրոնային հասցեից (m.hambardzumyan@moh.am) ստացանք բանակցությունների մասնակցության հրավեր հետևյալ տեքստով (ներկայացված է ստորև)՝

Օտ: "Mihran Hambardzumyan" <m.hambardzumyan@moh.am>

Дата: 4 апреля 2022 г., 12:53:00 GMT+4

Кому: "SIUN Medical Equipment & Services" <siunllc@gmail.com>, <yesargsyan@yahoo.com>, <lawyer@diavant.am>

Копия: <h.harutyunyan@moh.am>, <hmnatsakanyan@moh.am>, "Artur Gevorgyan" <artur.gevorgyan7078@gmail.com>

Тема: Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ

Հարգելի գործընկերներ,

Տեղեկացում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ձեր կազմակերպությունների կողմից ներկայացվել էին հայտեր:

Նշեմ նաև, որ ձեր կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հնարավոր մեկ անձից գնման գործընթացը՝ սույն թվականի ապրիլի 5-ին ժամը 17:00-ին ՀՀ առողջապահության նախարարությունում տեղի են ունենալու գների նվազեցման շուրջ բանակցություններ:

Խնդրում եմ ներկա գտնվել բանակցությունների նիստին: Կազմակերպությունների ներկայացուցիչները պետք է իրենց մոտ ունենան համապատասխան լիազորագիր և անձնագիր:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

Միհրան Համբարձումյան

Հեռ 060 80-80-03 (2703)

05.04.2022 թ. բանակցությանը 1-ին չափաբաժնի մասով մասնակցել էին <<Դիավանք>> ՍՊ և <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊ ընկերությունները, իսկ 2-ին չափաբաժնի մասով մասնակցել էին <<Դիավանք>> ՍՊ, <<ՍԻՈՒՆ>> ՍՊ և <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊ ընկերությունները:

Նշենք միայն, որ բանակցային գները սահմանվել են ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով հակադարձ աճուրդի ժամանակ ներկայացված վերջնական գները:

Բանակցությունների արդյունքում 1-ին չափաբաժնով հաղթող է ճանաչվել <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ը, իսկ 2-րդ չափաբաժնով հաղթող է ճանաչվել <<Դիավանք>> ՍՊԸ-ը:

<<Դիավանք>> ՍՊԸ-ն կողմից ներկայացված և բավարար գնահատված տեխնիկական բնութագրում նշված է՝ <<Արհեստական բանականության (AI) հատուկ մոդուլի առկայություն, մինչև 12 փարբեր տեսակի պնևմոնիաների ավտոմատ հայտնաբերման ֆունկցիայով>> պահանջը: Այնինչ DrGEM արտադրողի տեխնիկական տվյալների պաշտոնական և բոլորին հասանելի տղուսակում բացակայում են որևիցե հղումներ կամ տեղեկություններ այս տեսակի մոդուլի առկայության մասին:

2. ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

2.1 <<Գնումների մասին>> Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասի <<Ա>> ենթակետի, 5-րդ մասի <<Ա>> և <<Բ>> ենթակետերի, 6-րդ և 7-րդ մասերի հանաձայն՝ <<Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են>>

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

ա) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

ա) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)։

բ) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է փյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը։

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված փյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները։ Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված։

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին։

Սույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն

էլեկտրոնային աճուրդի կիրառման դեպքում հրավերը ներառում է նաև հետևյալ պայմանները.

1) ներկայացվելիք առաջարկների սահմանափակումները, որոնք բխում են գնման առարկայի բնութագրից.

2) էլեկտրոնային աճուրդի ընթացքում մասնակիցներին տրամադրվելիք տեղեկությունները և այդ տեղեկությունները նրանց տրամադրելու պայմանները.

3) էլեկտրոնային աճուրդի գործընթացին վերաբերող էական նշանակության տեղեկությունները.

4) մասնակիցների կողմից հայտեր ներկայացնելու պայմանները։ Ընդ որում, մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)։

3. ԲՈՂՈՔԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

3.1 Գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով գնման առարկա հանդիսացող Թվային սրացիոնար ռենտգենոգրաֆիկ համակարգ - երկու թվային դետեկտորով ապրանքի համար տեխնիկական բնութագրով նախատեսված է որակի գնահատման պահանջ CE Mark (Directive 93/42/EEC) կամ FDA կամ համարժեք վկայականի առկայություն: <<Դիավանտ>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրով ապրանքը չի համապատասխանում նախկինում հայտարարված երկու էլեկտրոնային գնման ընթացակարգերի հրավերի և մեկ անձով հայտարարված գնման ընթացակարգի հրավերի պահանջներին: Մասնավորապես << ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6, << ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 և << ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21 ծածկագրով գնման ընթացակարգերի հրավերներում նշված <<Արհեստական բանականության (AI) հատուկ մոդուլի առկայություն, մինչև 12 տարբեր տեսակի պնևմոնիաների ավտոմատ հայտնաբերման ֆունկցիայով>> պահանջին: <<Դիավանտ>> ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված հայտի տեխնիկական բնութագրում նշվել է այդ պայմանը: Սակայն փաստացի սարքը չունի այդ հնարավորությունը: Այսինքն, իրականում, <<Դիավանտ>> ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրով առաջարկված սարքը չունի այդ հնարավորությունը և նույնիսկ չի անցել կլինիկական հետազոտություններ և չունի FDA կամ CE վկայականներ, այդ վկայականները չեն ներկայացվել գնահատող հանձնաժողովին, ինչը հստակ հրավերի պահանջի խախտում է հանդիսանում և վկայականի բացակայությունը հիմք է հանդիսանում հայտը որակավորման բահանջի անբավարար ճանաչելու և հայտը մերժելու համար:

Որպես ապացույց ներկայացնում ենք DrGEM GXR-SD սարքի FDA սերտիֆիկատը (կից ներկայացվում է), որում բացակայում է (AI) հատուկ մոդուլի առկայությունը, այսինքն հատուկ մոդուլը չի անցել կլինիկական հետազոտություն և բացակայում է նրա CE Mark (Directive 93/42/EEC) կամ FDA կամ համարժեք վկայականը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Գնահատող Հանձնաժողովը պատշաճ կերպով չի գնահատել <<Դիավանտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (տեխնիկական բնութագրի) հիմնավորվածությունը, ինչի արդյունքում եկել է սխալ եզրահանգման:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Աննարկա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել Պատվիրատու << առաջապահության նախարարության «<< ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով Գնահատող հանձնաժողովին մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում մերժել «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և փոփոխել 2-րդ չափաբաժնով «Դիավանտ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին

գնահատող հանձնաժողովի որոշումը տեխնիկական բնութագրի հրավերին անհամապատասխանության հիմքով:

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում 2-րդ չափաբաժնով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Սիուն» ՍՊԸ-ին, ներկայացնել պահանջվող բոլոր փաստաթղթերը:

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում 2-րդ չափաբաժնով «Սիուն» ՍՊԸ-ի կողմից հայտի փաստաթղթերի բացակայության դեպքում հայտը մերժել, և ընտրված մասնակից ճանաչել 3-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Աննարկա» ՍՊԸ-ին համապատասխան գնիջեցման դեպքում:

«Աննարկա» ՍՊԸ-ն 25.04.2022թ.-ին ներկայացրած առարկություններով հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննությանն է առնված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/58 բողոքը՝ Դիավանտ, ՍՊԸ կողմից 11.04.2022թ.-ին ներկայացված «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով գնման ընթացակարգով բողոքի հիման վրա :

Գտնում եմ, որ բողոքը անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով 21.03.2022թ.-ին հրապարակվել է ՀՀ առողջապահության նախարարության իր կարիքների համար Համակարգչային տրոնոգրաֆի, Թվային ստացիոնար ռենտգենոգրաֆիկ համակարգ-երկու թվային դետեկտորովի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, որից հետո ՀՀ առողջապահության նախարարության կողմից 04.04.2022թ.-ին ուղարկվել է գրություն համաձայն որով տեղեկացվել ենք, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ձեր կազմակերպությունների կողմից ներկայացվել էին հայտեր:

Նշեմ նաև, որ ձեր կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հնարավոր մեկ անձից գնման գործընթացը՝ սույն թվականի ապրիլի 5-ին ժամը 17:00-ին ՀՀ առողջապահության նախարարությունում տեղի են ունենալու գների նվազեցման շուրջ բանակցություններ:

Սույն թվականի ապրիլի 6-ին ժամը 17:00-ին տեղի ունեցած բանակցություններին մասնակցել է թե բողոք ներկայացրած «Դիավանտ», ՍՊԸ-ն և թե «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն, որի արդյունքում ՀՀ ԱՆ առողջապահության նախարարության 2022թվականի կարիքների համար մեկ , բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ՄԱԱՊԶԲ-2022/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություն է կազմվել, համաձայն որի 1-ին չափաբաժնի՝ Համակարգչային փոմոգրաֆի/ FujiFilm FCT Speedia G2 (Japan)/ համար «Դիավանտ», ՍՊԸ-ն մեկ միավոր սարքի համար առաջարկել է 192.000.000 դրամ, իսկ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն 170.000.000 դրամ, ընդհանուր՝ համապատասխանաբար 384.000.000 դրամ և 340.000.000 դրամ և արձանագրության 4-րդ կետով նվազագույն գնառաջարկով 1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն:

Բողոքաբերի բողոքով նշված բողոքարկման ժամկետի տրամադրման պահանջ ներկայումս առարկայազուրկ է քանի որ բողոքի քննությամբ բողոքարկման իրավունքը արդեն իսկ իրացվել է , ինչ վերաբերում է գնման առարկայի տեխնիկական բնութագրին մատակարարման ենթակա ապրանքի անհամապատասխանությանը Բողոքաբերի փաստարկը կեղծ է ,չի համապատասխանում իրականությանը Բողոքաբերի բողոքով մասնավորապես նշված է, որ տեխնիկական բնութագրով 360° լրիվ պտույտով սկանավորման մինիմալ ժամանակը՝ 0,6 վրկ, սակայն FujiFilm արտադրողի պաշտոնական և բոլորին հասանելի տվյալներով 360° լրիվ պտույտով սկանավորման մինիմալ ժամանակը՝ 0,75 վրկ,, սակայն արտադրողի կողմից տրվել է պաշտոնապես հավաստում, որ սարքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է գնումներով պահանջվող սարքի տեխնիկական բնութագրին, իսկ արտադրողի կողմից տրված տեխնիկական բնութագրում նշված է 360° լրիվ պտույտով սկանավորման մինիմալ ժամանակը՝ 0,6 վրկ: Բացի այդ գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ ներկայացված հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող, նման պայմաններում դեռևս չմատակարարված ապրանքը չի կարող համարվել հրավերի տեխնիկական բնութագրին պահանջներին չհամապատասխանող:

Բացի այդ ՀՀ ԱՆ առողջապահության նախարարության 2022թվականի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ՄԱԱՊԶԲ-

2022/21» ծածկագրով կիրառվել է մեկ անձից գնման ընթացակարգ, որի պայմաններում «Դիավանտ» ՍՊԸ-ն որևէ իրավական հիմքով չի կարող համարվել ընտրված մասնակից:

Այսպիսով անհիմն բողոքի բավարարման հետևանքով ՀՀ պետական բյուջեից հարկադրված իրականացվելու է 42.000.000 դրամ ավելի վճարում և այդ չափով վնաս է պատճառվելու պետությանը:

Ցանկանում եմ նշել նաև, որ արտադրողի կողմից պաշտոնապես հավաստում, որ սարքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է գնումներով պահանջվող սարքի տեխնիկական բնութագրին պահանջվել է միայն <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ից:

Հիմք ընդունելով վերոգրյալը խնդրում եմ մերժել «Դիավանտ» ՍՊԸ բողոքը:

Ֆուլիքսիմ Եվրոպա ԶՄԲԸ պաշտոնապես հավաստման գրության և Համակարգչային տոմոգրաֆի տեխնիկական բնութագրի հայերեն թարգմանության բնօրինակը 21.04.2022թ.-ի տեղի ունեցած նիստով ներկայացվել է:»:

«Աննարկա» ՍՊԸ-ն 04.05.2022թ.-ին ներկայացրած առարկություններով հայտնել է հետևյալը.

«11.04.2022 թ-ին «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք Պատվիրատու՝ 33 Առողջապահության Նախարարության որոշման դեմ, համաձայն որի ՀՀ ԱՆ ՄԱԱՊԶԲ-2022/21 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հաղթող է ճանաչվել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն:

Բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Տեխնիկական բնութագիրը լրացվել է ԼԷ ներկայացվել է՝ ղեկավարվելով 33 ԱՆ ՄԱԱՊԶԲ-2022/21 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրի պահանջների: Ներկայացված սարքը՝ Յամակարգչային տոմոգրաֆ FCTSpeedia իր լրակազմով համապատասխանում է հրավերում նշված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Ներկայացնում ենք FUJIFILM Healthcare Corporation արտադրող ընկերության կողմից տրված 21.04.2022 թ պաշտոնական հավաստումը (Letter of Confirmation) և, FCT Speedia համակարգչային տոմոգրաֆի ECG Prospective Scan տեխնիկական բնութագիրը, որում հստակ երևում է 360° լրիվ պտույտով Ականավորման մինիմալ ժամանակը:

Վերը նշվածը հաշվի առնելով գտնում ենք, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:»:

«Աննարկա» ՍՊԸ-ն 04.05.2022թ.-ին ներկայացրած մեկ այլ առարկություններով հայտնել է նաև հետևյալը.

«29.04.2022 թ-ին «Դիավանդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է առարկություն, համաձայն որի մեր ընկերության կողմից ներկայացված համանման բողոքը՝ ՀՀ Առողջապահության նախարարություն (այսուհետ՝ Պարվիրատու) բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱՆ ՄԱԱՊԶԲ-2022/21 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով անհիմն է և ենթակա է մերժման:

ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՄԼՈՒՄ Է ԱՆՓՈՓՈՒՆ. ԲՈՂՈՔԸ ԱԿՏՈՒԱԼ Է:

«Դիավանդ» ՍՊԸ-ն իր առարկությունում նշում է թե «որակի սերտիֆիկատների առկայությունը պահանջ է ներկայացվել ամբողջական սարքի մասով»:

Հրավերի տեխնիկական բնութագիրը ուշադիր դիտելուց պարզ է դառնում, որ ՈՉ ՄԻ ՏԵՂ նույնիսկ նշում չկա, որ սերտիֆիկատները պահանջվում են ամբողջական սարքի մասով: «Դիավանդ» ՍՊԸ կողմից նշված նախադասությունը կարելի է նշել ինչպես ցանկություն, երազանք կամ սխալ եզրակացություն, որի մասով իրենք կարող էին պարզաբանում խնդրել Պարվիրատուից: Իրենք որոշել են, որ չգիտես ինչու հրավերի վերջին 3 տողերում նշված պահանջները վերաբերվում են ռենտգեն համալիրին, բայց չեն վերաբերվում արհեստական բանականության (AI) մոդուլին:

Ստորև կետ առ կետ մենք կպարզաբանենք, ինչու է «Դիավանդ» ՍՊԸ այդպես «որոշել»:

1. «Դիավանդ» ՍՊԸ-ն բացատրում էր թե իբրև ռենտգեն սարքը և արհեստական բանականության (AI) մոդուլը դա մեկ լրակազմ է: Դա նույն է ինչպես ասել որ նկարներ ստանալու ֆոտոխցիկը և Photoshop ծրագիրը դա մեկ լրակազմ է, ինչը ուղղակի զավեշտ է:

Ներկայացնում ենք հավելված 1-ում՝

ա/ GXR-SD սարքի FDA հավաստագիրը (որտեղ իհարկե ԲԱՑԱԿԱՅՈՒՄ է «ռենտգենի լրակազմի մաս» հանդիսացող AiMax արհեստական բանականության (AI) մոդուլը)

բ/ www.drgem.co.kr DrGem ընկերության պաշտոնական կայքի սկրինները, որտեղ ՈՉ ՄԻ ԽՈՍՔ ՉԿԱ AiMax արհեստական բանականության (AI) մոդուլի մասին, ինչպես նաև նրա «ռենտգենի լրակազմի մաս» հանդիսանալու մասին

գ/ GXR-SD սարքի օգտագործողի ձեռնարկը, որտեղ զարմանալիորեն նորից ՈՉ ՄԻ ԽՈՍՔ ՉԿԱ AiMax արհեստական բանականության (AI) մոդուլի մասին, ինչպես նաև նրա «ռենտգենի լրակազմի մաս» հանդիսանալու մասին

2. Բժշկական ծրագրային ապահովումը, ինչպես նաև բժշկական բնագավառում անձնական տվյալների, ռենտգեն ախտորոշման նկարների հետ աշխատող արհեստական բանականության մոդուլները համարվում են բժշկական ոլորտում կիրառություն ունեցող սարքեր (medical device), որոնք ՊԱՐՏԱԴԻՐ ՊԵՏՔ Է ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ ՍՏԱՆԱՆ ԱՆԿԱԽ ԱՅՆ ԲԱՆԻՑ ՄՏՆՈՒՄ ԵՆ ՆՐԱՆՔ ՍԱՐՔԻ ԼՐԱԿԱԶՄԻ ՄԵՋ. ԹԵ ՈՉ:

Ներկայացնում ենք հավելված 2-ում՝

ա/ ձեռնարկ *What regulators expect from medical device manufacturers of software with artificial intelligence (AI) & machine learning*

բ/ քանի որ «Դիավանտ» ՍՊԸ-ն («Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ն) հանդիսանում է Canon Medical ընկերության գործընկեր, ընկալումը դյուրին դարձնելու նպատակով Ներկայացնում ենք հենց այդ ընկերության՝ VITREA SOFTWARE PACKAGE ծրագրային ապահովման FDA հավաստագիրը (որը անցել է առանձին հավաստագրում, չնայած այն հանգամանքի որ մտնում է փարբեր սարքերի լրակազմի մեջ)

3. «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել էին ինչ-որ «համապատասխանության հավաստագրեր», ստորագրված DrGem ընկերության նախագահի անունից: Նշենք, որ արտադրող ընկերությունը հավաստագրում կատարելու իրավասություն չունի և չի էլ կարող ունենալ: Արտադրողը ներկայացնում է իր արտադրանքը համապատասխան փորձաքննություն անցկացնող մարմին և այդ մարմինն է տրամադրում հավաստագիր: Արհեստական բանականության (AI) մասով 26.05.2021թ գործում են հետևյալ ստանդարտներն ու նորմերը՝ EU 2017/745 Medical Device Regulation (MDR), EU 2017/746 In Vitro Diagnostic Medical Device Regulation (IVDR), ISO13485 Quality Management System for Medical Device և ISO 27001 Information Security System: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «DrGem AiMax How to use» իբրև օգտագործման ձեռնարկը, որում CE Mark և MD (Medical Device) խորհրդանիշները ԲԱՑԱԿԱՅՈՒՄ ԵՆ: Կարող ենք հստակ արձանագրել, որ DrGem AiMax արհեստական բանականության (AI) մոդուլի հավաստագրումը բացակայում է, բժշկական սարքի (ծրագրային ապահովման) և տեղեկատվության անվտանգության համակարգերը չունեն բժշկական բնագավառում օգտագործման թույլտվություն:

Ներկայացնում ենք հավելված 3-ում՝

ա/ որպես օրինակ, ներկայացնում ենք համաշխարհային համրավունեցող FujiFilm Healthcare և GE Healthcare ընկերությունների հետ արհեստական բանականության (AI) մասով համագործակցող, մեր գործընկեր, LUNIT ընկերության արհեստական

բանականության (AI) 2 (երկու) փարբեր՝ Մամոգրաֆիայի և Կրծքավանդակի ռադիոգրաֆիայի ծրագրային ապահովումների համապատասխանության հավաստագրերը և օգտագործողի ձեռնարկները, որոնց 2-րդ էջում հստակ նշված են CE Mark և MD (Medical Device) խորհրդանիշները, որոնք հավաստում են բժշկական սարքի (ծրագրային ապահովման) հավաստագրված լինելը, բժշկական բնագավառում օգտագործման թույլատրությունը, բարձր որակը և անվնաս լինելը: Օրինակները ներկայացված են հասկանալու համար թե ինչպիսի փեսք պեսք է ունենան արհեստական բանականության (AI) արտադրող համաշխարհային համբավ և որակ ունեցող ընկերության CE Mark, FDA, ISO13485, ISO 27001 և User Manual փաստաթղթերը:

4. «Դիվանդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված DrGem ընկերության «AiMax» արհեստական բանականության (AI) մոդուլի անվանումը ՉՈՒՆԻ ԱՆՎԱՆՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ DrGem ընկերության կողմից, ինչը զարմանք է առաջացնում և անհնարին է բժշկական և մյուս բոլոր բնագավառներում:

Ներկայացնում ենք հավելված 4-ում՝

ա/ <https://www.uspto.gov/> (United States patent and trademark office) կայքում տվյալները AiMax արհեստական բանականության անվանման գրանցման մասին բացակայում են

Ընդհանրացնելով վերոգրյալը՝

1. Պատվիրատուի կողմից ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով պահանջված CE Mark կամ FDA կամ համարժեք և ISO13485 կամ համարժեք հավաստագրերի առկայությունը ՊԱՐՏԱԴԻՐ է ինչպես ռենդգեն սարքի, այնպես էլ արհեստական բանականության (AI) մոդուլի համար:

2. «Դիվանդ» ՍՊԸ-ն պատրաստվում է մատակարարել ՀՀ մարզերի բուժ հաստատություններ ՈՉ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ, Պատվիրատուի կողմից պահանջված նորմերին ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ արհեստական բանականության մոդուլ, ինչը ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ է:

3. «Դիվանդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թղթերը չեն կարող համարվել հավաստագրեր:

4. «Դիվանդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված DrGem ընկերության «AiMax» անվանման վերաբերյալ բացակայում են որևէ գրառում թե արտադրողի կայքում, թե

հավաստագրում կատարող (EU, USA) իրավասու մարմինների տվյալներում, թե իրավասու մարմինների կողմից տրված հավաստագրերում:

5. Արհեստական բանականության (AI) մոդուլը հանդիսանում է որպես առանձին մաս և պետք է ՊԱՐՏԱԴԻՐ հավաստագրված լինի: Շրջաններում բնակվող մեր առավել անապահով ազգաբնակչությունը չպետք է հանդիսանա փորձարկումների առարկա և անցնի ռենտգեն հետազոտություն ոչ հավաստագրված բժշկական սարքերով (medical device):

ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՄԼՈՒՄ Է ԱՆՓՈՓՈՒՄ. ԲՈՂՈՔԸ ԱԿՏՈՒԱԼ Է:»:

4. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 12.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6335-2022 և 25.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7332-2022 գրություններով դիմել է ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Դիավանտ» ՍՊԸ-ի և «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից համապատասխանաբար 11.04.2022թ.-ին և 25.04.2022թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը:

Պատվիրատուն 15.04.2022թ.-ի թիվ ՎԳ/15/8775-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 12.04.2022թ. գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «Համակարգչային տոմոգրաֆ» և «Թվային ստացիոնար ռենտգենոգրաֆիկ համակարգ - երկու թվային դետեկտորով» գնման առարկաների մասով կազմակերպվել է թվով երկու մրցակցային գնման ընթացակարգեր («ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6» և «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16»), որոնք ձախողվել են, ուստի սարքավորումների գնումն իրականացնելու համար, որոշվել է վերջիններիս ձեռք բերել մեկ անձից գնման ընթացակարգով՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2020թ. մարտի 12-ի թիվ 296-Ա որոշումով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշվել էր «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով գնման ընթացակարգին հրավիրել մասնակցելու «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ- 2022/16» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր բավարար գնահատված մասնակիցներին (արձանագրությունը կցվում է):

Հարկ եմ համարում նշել, որ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նաև արտադրող կազմակերպության կողմից տրված գրություն (կցվում է), համաձայն որի «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:»:

Պատվիրատուն 27.04.2022թ.-ի թիվ ՎԳ/15/10185-22 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2022թ. ապրիլի 25-ի գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «Համակարգչային տոմոգրաֆ» և «Թվային սպացիոնար ռենտգենոգրաֆիկ համակարգ - երկու թվային դետեկտորով» բժշկական սարքավորումներ ձեռքբերելու նպատակով կազմակերպվել է թվով երկու մրցակցային գնման ընթացակարգ («ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6» և «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16»), որոնք ձախողվել են, ուստի սարքավորումների գնումն իրականացնելու համար, որոշվել է վերջիններս ձեռք բերել մեկ անձից գնման ընթացակարգով՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2020թ. մարտի 12-ի թիվ 296- Ա որոշումով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշվել էր «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով գնման ընթացակարգին հրավիրել մասնակցելու «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ- 2022/16» ծածկագրով գնման ընթացակարգին բավարար հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին (արձանագրությունը կցվում է):

Հարկ եմ համարում նշել, որ արհեստական բանականության (AI) հատուկ մոդուլը մշակվել է մի շարք ընկերությունների կողմից կորոնավիրուսի համավարակի տարածումից հետո: Այդ մոդուլը իրենից ներկայացնում է ծրագրային ապահովում ռենտգենյան սարքավորումների համար փարբեր տեսակի պնևմոնաների ավտոմատ հայտնաբերման նպատակով: Այն հեշտացնում է բժշկական անձնակազմի աշխատանքը և արագացնում է խնամյալի հետազոտության և ախտորոշման գործընթացը, ապահովում է առաջընթաց ռադիոլոգիայի ոլորտում: Այդ մոդուլը կարող է կցվել ցանկացած ռենտգենյան սարքավորման հետ որպես այդ սարքավորման ծրագրային ապահովման մի մաս: «Արհեստական բանականության (AI) հատուկ մոդուլի առկայություն, մինչև 12 փարբեր տեսակի պնևմոնաների ավտոմատ հայտնաբերման ֆունկցիայով» պլանինչին կարող է

համապատասխանել ցանկացած ռենդգենյան սարքավորում վերջինիս մեջ այդ ծրագիրը ներառելուց հետո:

Ինչ վերաբերում է CE Mark (Directive 93/42/EEC) կամ FDA կամ համարժեք սերտիֆիկատի պահանջին՝ ապա այդ սերտիֆիկատը տրվում է և վերաբերում է սարքավորման ամբողջ համակարգի համար, այլ ոչ թե սարքավորման որևէ կոմպոնենտի կամ ծրագրի համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունը ևս մեկ անգամ հաստատում է իր որոշումը «ՀՀ ԱՆ ԱԱԱՊՁԲ- 2022/21» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի («Թվային ստացիոնար ռենդգենոգրաֆիկ համակարգ - երկու թվային դետեկտորով») մասով «Դիավանտ» ՍՊԸ-ին ընդրված մասնակից ճանաչելու մասով:»:

5. Երրորդ անձ՝ «Սիուն» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Սիուն» ՍՊԸ-ն 29.04.2022թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին՝ ներկայացնելով բանավոր դիրքորոշում:

6. ԳԲԲԱ-LO-2022/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 24.02.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Դիավանտ» ՍՊԸ-ն, «Աննարկա» ՍՊԸ-ն և «Սիուն» ՍՊԸ-ն:

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր -

գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում՝

1-ին չափաբաժնի մասով «Համակարգչային տոմոգրաֆ» ապրանքատեսակը, որի տեխնիկական բնութագրով, բացի այլ չափորոշիչներից, սահմանվել է. «360° լրիվ պտույտով սկանավորման մինիմալ ժամանակը՝ ոչ ավելի քան 0,6վրկ»:

2-րդ չափաբաժնի մասով «Թվային ստացիոնար ռենտգենոգրաֆիկ համակարգ - երկու թվային դետեկտորով» ապրանքատեսակը, որի տեխնիկական բնութագրով, բացի այլ չափորոշիչներից, սահմանվել է. «Որակի վկայականներ (առկայություն)՝ ISO 13485 կամ համարժեք, ISO 9001 կամ համարժեք, CE Mark (Directive 93/42/EEC) կամ FDA կամ համարժեք»:

iii. Հանձնաժողովի 21.03.2022թ.-ին նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետի:

iv. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.04.2022թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, այն որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հրապարակված թվով 2 մրցակցային գնման ընթացակարգերը «Համակարգչային տոմոգրաֆ» և «Թվային ստացիոնար ռենտգենոգրաֆիկ համակարգ - երկու թվային դետեկտորով» գնման առարկաների մասով ձախողվել են (2021թ.-ի դեկտեմբերի 10-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6» և 2022թ.-ի փետրվարի 24-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16»), որոշել է «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով գնման ընթացակարգին հրավիրել մասնակցելու «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր բավարար գնահատված մասնակիցներին:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է բավարար գնահատված բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որին ներկայացել էին բոլոր 3 մասնակիցների ներկայացուցիչները: Բանակցությունների արդյունքում ներկայացվել են վերջնական գնային առաջարկները:

Չափաբաժնի համար	Անվանում	Քանակ	Մասնակիցներ	Գնային առաջարկ	
				Միավորի գին	Գումար

1	Համակարգչային տոմոգրաֆ	2,00	«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ	170.000.000,00	340.000.000,00
			«Դիվանտ» ՍՊԸ	192.100.000,00	384.200.000,00
2	Թվային ստացիոնար ռենտգեն ոգրաֆիկ համակարգ - երկու թվային դետեկտորով	7,00	«Դիվանտ» ՍՊԸ	52.000.000,00	364.000.000,00
			«Սիուն» ՍՊԸ	55.000.000,00	385.000.000,00
			«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ	150.000.000,00	1.050.000.000,00

Հանձնաժողովը, հաշվի առնելով միաժամանակյա բանակցությունների արդյունքները, որոշել է «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել.

1-ին չափաբաժնի մասով - «Աննարկա» ՍՊԸ (340.000.000 ՀՀ դրամ),

2-րդ չափաբաժնի մասով - «Դիվանտ» ՍՊԸ (364.000.000 ՀՀ դրամ):

7. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Դիվանտ» ՍՊԸ-ի կողմից 11.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, իսկ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից 25.04.2022թ.-ին ներկայացված համանման բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլինեն ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլինեն տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը

ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն

կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 24.02.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2022/16» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Դիավանտ» ՍՊԸ-ն, «Աննարկա» ՍՊԸ-ն և «Սիուն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում՝

1-ին չափաբաժնի մասով «Համակարգչային տոմոգրաֆ» ապրանքատեսակը, որի տեխնիկական բնութագրով, բացի այլ չափորոշիչներից, սահմանվել է. «360° լրիվ պտույտով սկանավորման մինիմալ ժամանակը՝ ոչ ավելի քան 0,6վրկ»:

2-րդ չափաբաժնի մասով «Թվային ստացիոնար ռենտգենոգրաֆիկ համակարգ - երկու թվային դետեկտորով» ապրանքատեսակը, որի տեխնիկական բնութագրով, բացի այլ չափորոշիչներից, սահմանվել է. «Որակի վկայականներ (առկայություն)՝ ISO 13485 կամ համարժեք, ISO 9001 կամ համարժեք, CE Mark (Directive 93/42/EEC) կամ FDA կամ համարժեք»:

Հանձնաժողովի 21.03.2022թ.-ին նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետի:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է նոր «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ, որի շրջանակներում Հանձնաժողովը, հաշվի առնելով այն, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հրապարակված թվով 2 մրցակցային գնման ընթացակարգերը «Համակարգչային տոմոգրաֆ» և «Թվային ստացիոնար ռենտգենոգրաֆիկ համակարգ - երկու թվային դետեկտորով» գնման առարկաների մասով ձախողվել են (2021թ. դեկտեմբերի 10-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6» և 2022թ. փետրվարի 24-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16»), որոշել է «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով գնման ընթացակարգին հրավիրել մասնակցելու «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր բավարար գնահատված մասնակիցներին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցը, «Դիավանտ» ՍՊԸ-ի և «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստական հանգամանքներն ու ապացույցները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ներկայացված փաստական հանգամանքների միջև առկա են հակասություններ. Մասնավորապես՝ մի դեպքում «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստական հանգամանքների ու ապացույցների հիման վրա արձանագրվում է, որ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնով առաջարկվող համակարգչային տոմոգրաֆ արտադրող «FujiFilm» ընկերության FCT Speedia G2 (Japan) ապրանքի սկանավորման մինիմալ ժամանակը՝ 360° լրիվ պտույտով, 0,75 վրկ. է, մյուս դեպքում՝ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստական հանգամանքների ու ապացույցների հիման վրա արձանագրվում է, որ վերջինիս կողմից առաջարկվող վերը նշված ապրանքատեսակը համապատասխանում է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված նվազագույն պայմաններին ու պահանջներին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է կիրառվի Կարգի

67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տվյալների իսկությունը, հետևյալ պատճառաբանությամբ.

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

«Վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության

գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետախիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը (*տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 67-րդ կետով ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Սույն դեպքում Կարգի 41-րդ կետերի դրույթները կիրառելի չեն, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ նշված նորմերի կիրառումը վերաբերում է մասնակցի հայտում՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովը, ելնելով սույն գործի քննության ընթացքում պարզված և հաստատված փաստական տվյալներից, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները և «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկվող «FujiFilm» ընկերության FCT Speedia G2 (Japan) ապրանքատեսակի՝ տեխնիկական չափորոշիչների իսկությունը ստուգելու համար հարցում ներկայացնի «FujiFilm» արտադրող ընկերությանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն միայն «FujiFilm» արտադրող ընկերությանը դիմելու մասով:

Անդրադառնալով բողոքով ներկայացված մնացած պահանջներին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ դրանք անհիմն են և ենթակա մերժման, այն փաստի հաշվառմամբ, որ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կարող է անբավարար գնահատվել ու մերժվել Օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով սահմանված կանոնների հիման վրա. Մասնավորապես՝ Հանձնաժողովի կողմից դեռ պետք է կիրառվի Կարգի 67-րդ կետի դրույթները, որից հետո իրականացվի «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերի ամբողջական ու լիարժեք ուսումնասիրություն՝ գնահատում, «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, որն Օրենքի 26-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է գնահատող հանձնաժողովը: Այդ գնահատման արդյունքում է հնարավոր փաստել մասնակցի՝ որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի հանգամանքը, որից հետո նոր միայն Հանձնաժողովն իրավասու է հայտը բավարար գնահատված որևէ մասնակցի հայտարարել ընտրված մասնակից:

Անդրադառնալով «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից համանման բողոքով «Դիավանտ» ՍՊԸ-ի մասով ներկայացված 1-ին պահանջին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ՝ ինչպես «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով, այնպես էլ և Պատվիրատուի 27.04.2022թ.-ի թիվ ՎԳ/15/10185-22 գրությամբ հաստատվում է, որ CE Mark (Directive 93/42/EEC) կամ FDA կամ համարժեք որակի սերտիֆիկատները տրվում է (են) և վերաբերում է (են)

սարքավորման ամբողջ համակարգի համար, այլ ոչ թե՛ սարքավորման որևէ կոմպոնենտի կամ ծրագրի համար, որպիսի պայմաններում մերժման են նաև ենթակա որպես հետևանք «Սիուն» ՍՊԸ-ի մասով ներկայացված 2-րդ և 3-րդ պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարել մասնակիորեն:

2. Պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ՄԱԱՊՁԲ-2022/21» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (պատվիրատուին) դիմել «Fujifilm» արտադրող ընկերությանը և պահանջել պաշտոնական հավաստում՝ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վեճի առարկա հանդիսացող ապրանքի չափորոշիչների՝ հրավերի տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

3. Մնացած մասով բողոքը մերժել:

4. «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մերժել ամբողջությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝**



ԼԵՎՈՆ ՕՇԱՆՅԱՆ